ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 418
*ներքական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Նորաշեն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ*
*(Արտաշատ համայնքի (Նորաշեն բնակավայրի) գոտևորման նախագծերի մասով)*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքը (Նորաշեն բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Արարատ-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Նորաշեն բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 03-069-0106-0002 կադաստրային ծածկագրով 1.39 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող | 03-069-0106-0002 կադաստրային ծածկագրով 1.39 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Արտաշատ համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Նորաշեն բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Արարատի մարզի Արտաշատ համայնքի (Նորաշեն բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծերում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝ ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի աշխատանքային պարտականությունները կատարող* | | |
| | | Լ.Պալյան |

Երևան, « 4 » «նոյեմբերի» 2024 թ.